

«Ա.Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն»

Գեղարքունիքի տարածաշրջանային մասնաճյուղ



ՄԱՍՈՒԼԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐ

2021թ.

31.10.2021

Ինչու՞ չեղարկվեց Նոր տարին. Էդգար Էլբակյան

«ԻՆՉՈ՞Ւ ԶԵՂԱՐԿՎԵՑ ՆՈՐ ՏԱՐԻՆ»

- Ամանորյա հանգստյան օրերը կրճատելը ոչ մի առնչություն չունի ՀՆԱ-ի, «տնտեսական աճի» և նման հակազիտական հիմարաբանությունների հետ: Ցանկացած իրեն հարգող սկսնակ տնտեսագետ կփաստի, որ դրանց միջև որևէ կոռելյացիա կամ առավել ևս՝ հարուցում չկա՝
- Միակ մոտիվացիան, որ կարող ենք պնդել՝ հիմնվելով այս դրածո և կոլաբորացիոնիստական իշխանությունների ընդհանուր գործելակերպի վրա, այն է, որ այս քայլը հասարակական շարժունությունը (մոբիլությունը), քաղաքային միջին խավի բնակչության միջև հորիզոնական կապերը քչացնելն է:
- Ցանկացած գաղութատիրական իշխանության համար ներհասարակական սոցիալական ամուր կապերը գլխացավանք են: Կապիտուլյանտի վարկանիշն այս տարի ամենացածրը եղել է Բաղրամյանի փակ եղած օրերին, երբ գաղափարակից և գաղափարամերձ մարդիկ բառիս բուն և փոխաբերական իմաստով ուս ուսի տված էին, իսկ դրանից հետո նորից սկսեց աճել...»– ֆեյսբուքյան իր էջում գրում է քաղաքագետ Էդգար Էլբակյանը:

https://antifake.am/am/news/15964?fbclid=IwAR1RMlxnpxMTq8Y63kWqTkewROytnVc8WPKH6WYFdKToPqVsu_E45yCgLI

27.10.2021

Կեղծ դիպլոմ ներկայացրած նախկին փոխմարզպետը Փաշինյանի ձեռամբ վերանշանակվեց

Հոկտեմբերի 26-ին Փաշինյանը որոշել է Վահան Չարոյանին նշանակել Գեղարքունիքի մարզպետի տեղակալ:

Առաջին հայացքից սովորական այս նշանակումը, սակայն, իրականում վարչապետի աթոռին կառչածի հերթական խայտառակ որոշումն է, քայլ, որը և՛ տրամաբանությունից դուրս է, և՛ գավեշտալի:

Բանն այն է, որ կարկառուն նիկոլական Վահան Չարոյանն առաջին անգամը չէ, որ փոխմարզպետ է նշանակվում իր շեֆի ձեռամբ. նա այդ նույն «առաջնորդի» կողմից նույն պաշտոնին էր նշանակվել նաև 2018 թ. հունիսի 27-ին և շուրջ 3,5 ամիս անց՝ 2018 թ. հոկտեմբերի 16-ին, ազատվել էր աշխատանքից: Ըստ մամուլում շրջանառվող լուրերի՝ «կարկառուն հեղափոխականը» փոխմարզպետի պաշտոնում նշանակվելու համար դիպլոմ էր կեղծել, ինչի բացահայտվելուց հետո շեֆը ստիպված էր նույն ձեռքով ստորագրել նրա ազատման հրամանը:

Վահան Չարոյանի նկատմամբ նշված փաստի առիթով հարուցված քրեական գործը կարճվել է՝ համաներման հիմքով: Չի բացառվում, որ նրան հեշտությամբ և կարճ ժամանակում ներել են կարկառուն նիկոլական լինելու համար:

Հիշեցնենք՝ Վահան Չարոյանն աչքի էր ընկել շեֆին մատուցած այլ ծառայություններով. նա 2019 թ. «հերոսական» պայքար էր մղել նաև ՀՀ 2-րդ նախագահի դեմ՝ ընդգրկվելով նրա դեմ ցույց իրականացնողների շարքերում: Այնուհետև նա բախտը փորձել էր Վարդենիսի քաղաքապետի ընտրություններում, բայց այստեղ էլ չէր հաջողել՝ հավաքելով ընդամենը 504 ձայն և փառքի

դափնիները զիջելով Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոյանի համակուրսեցի Արամ Մելքոնյանին:

Այդուհանդերձ, չուրանալով Վահան Ջարոյանի՝ հայրենիքին, ներողություն, հայրենիքը օրը ցերեկով թշնամուն զիջող «առաջնորդին» մատուցած ծառայությունները, Փաշինյանը, նրան փորձեց նաև պատգամավոր դարձնել: Արդյունքում՝ անդիպումավոր վարդենիսցին, որին իշխող վարչախումբը մինչ այդ հասցրել էր խցկել ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմին՝ որպես իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության խորհրդական, զբաղեցրեց 2021 թ. հունիսի 20-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին մասնակցող ԲՊ կուսակցության ցուցակի 104-րդ համարը: Ինչպես տեսանք, Ջարոյանի բախտն այստեղ էլ չբերեց, և ընտրությունների արդյունքում նա այդպես էլ չդարձավ երեսփոխան:

Նշված ողիսականի ավարտին՝ Փաշինյանը, առաջնորդվելով «Պոլի փայտ լինի, բայց մերոնցական լինի» ՀՀ-ական հայտնի կարգախոսով, Վահան Ջարոյանին վերստին նշանակեց իր հին պաշտոնին՝ Գեղարքունիքի փոխմարզպետ:

Փաշինյանը կեղծված դիպլոմի պատճառով Գեղարքունիքի փոխմարզպետի պաշտոնից ազատեց Վահան Ջարոյանին, 3 տարի անց նույն Փաշինյանը Գեղարքունիքի փոխմարզպետի պաշտոնին նշանակեց այդ նույն Վահան Ջարոյանին:

<http://yerkir.am/news/view/251701.html>

26.10.2021

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը դեմ է Ամանորին հանգստյան օրերի քանակի կրճատմանը

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հանրային ծառայությունների աշխատողների հանրապետական արհմիությունը հայտարարություն է տարածել «Տոների և հիշատակի մասին» օրենքում փոփոխություն կատարելու Կառավարության ներկայացրած նախագծի վերաբերյալ: Այն ամբողջությամբ ներկայացնում ենք ստորև.

«Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը Ազգային ժողովի նախագահին, ԱԺ խմբակցություններին, ԱԺ մշտական հանձնաժողովներին է ուղարկել Ամանորյա տոների չեղարկման նախագծի հետ կապված գրություն, որով կոչ է արել ԴԵՄ քվեարկել հակաժողովրդական ու հակապետական նախագծին, փոխարենը ծավալելով լայն քննարկումներ, ինչպես որ հանձնարարել էր ՀՀ վարչապետը: Օրենսդիրներին հիշեցրել ենք, որ Նախագիծն ընդունվել է ավտորիտար երկրին բնորոշ ոճով՝ խախտելով Հանրապետական կոլեկտիվ պայմանագիրը և սոցիալական երկխոսության ու ժողովրդավարության սկզբունքը:

Ներկայացրել ենք մեր բացասական կարծիքը տվյալ Նախագծի վերաբերյալ, շեշտելով, որ Նախագիծն Էկոնոմիկայի նախարարության կողմից հիմնավորվել է հակասական, մակերեսային և կեղծ պնդումներով:

Մասնավորապես, նշել ենք, որ՝

- Պետական եկամուտների կոմիտեի և ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից մեզ տրամադրված տվյալները փաստում են, որ **ԳՈՅՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՆ** տվյալներ, որոնց համաձայն ոչ աշխատանքային օրերին ավելի պակաս ՀՆԱ է գեներացվում, քան աշխատանքային օրերին:

Բոլորին հայտնի է, որ բազում ոլորտներ աշխատում են նաև ոչ աշխատանքային օրերին, և գուցե նույնիսկ ավելի շատ, քան աշխատանքային օրերին:

- Աշխարհի գրեթե բոլոր երկրներում տարվա առաջին ամիսներն ավելի պակաս ՀՆԱ են ստեղծում, քան տարվա երկրորդ կեսի ամիսները, և դա կապված չէ աշխատանքային օրերի քանակից, կամ այդ պետությունում Նոր Տարի տոները ավանդույթից:
- Ամանորյա և Սուրբ Ծննդյան տոներն անկախ Հայաստանում նպաստել են Հայաստանի՝ Եվրոպական ու քրիստոնեական աշխարհի անցուդարձին ինտեգրմանը, դրանով արժևորվել է հասարակության մշակութային, կրոնական ու քրիստոնեական ինքնությունը, ի տարբերություն սովետական ապամշակութային քաղաքականության, որին փաստորեն այս Նախագծով փորձ է արվում վերադառնալ:
- Ճշգրիտ չէ այն հիմնավորումը, որ տոների քանակով Հայաստանն առաջատար է: Կան բազմաթիվ պետություններ, որտեղ տոներն ավելի շատ են. Հայաստանն այդ ցուցանիշով գտնվում է ընդամենը միջին հորիզոնականներում:
- Ճշգրիտ չէ այն պնդումը, որ Նախագիծն ընդունելու դեպքում տարվա մեջ ավելանալու է 5 աշխատանքային օր, քանի որ գոյություն ունեն նաև շաբաթ և կիրակի օրեր, որոնք համընկնելու են Ամանորյա օրերի հետ: Գործնականում Ամանորից հրաժարվելը տարվա կտրվածքով ավելացնելու է մոտ երեքուկես աշխատանքային օր:
- Նախագծով Հայաստանի ինքնիշխանությունը ստորադասվում է «օտարերկրյա գործընկերների հետ պայմանագրային հարաբերությունների իրականացման» կեղծ օրակարգին: Եվրամիության երկրներում դեկտեմբերին փաստացի տաս օր նշվում են Սուրբ Ծննդյան տոները: Ռուսաստանում հունվարի 1-ից 8-ը նշվում են Ամանորյա տոները: Չինաստանում փետրվարին գրեթե 20 օր տևողությամբ նշվում է Չինական Նոր տարին: Իրանում մարտ ամսին առնվազն մեկ շաբաթ նշվում է Նովրուզը: Արաբական էմիրություններում հանգստյան օր է համարվում երկուշաբթին՝ շաբաթ օրվա փոխարեն: ԱՄՆ-ում աշխատանքային օրերն այն ժամանակ են, երբ աշխարհի այլ երկրներում գիշեր է: Նշվածներն, ի դեպ, Հայաստանի առևտրային խոշոր գործընկերներն են: Ինչպես տեսնում ենք, որևէ երկիր իր մշակույթն ու ինքնիշխանությունը չի վաճառել հանուն բիզնեսի և այլ երկրների հետ «պայմանագրերի»: Ինչո՞ւ է հենց Հայաստանը որոշել բիզնեսի համար հրաժարվել իր մշակութից՝ այն էլ աշխատողների հաշվին:
- Ինքնին տնտեսության վիճակագրական թվերը, կոնտեքստից կտրված, կապ չունեն մարդու կյանքի որակի հետ, և տնտեսական ժամանակակից գիտությունը դա հայտնի է արդեն վաղուց: Մարդու կյանքի որակը, հանրության հոգեկան և սոցիալական բարեկեցությունը, մարդկային զարգացումը, հանրային ծառայությունների որակը մեծապես կախված են ոչ թե նրանից, թե ՀՆԱ-ն որքան տոկոս աճ կապահովի, այլ նրանից, թե որքանով է պետությունը ճիշտ կարգավորում ոչ ֆորմալ զբաղվածությունը, ոչ ավանդական զբաղվածությունը, հարկային քաղաքականությունը, նվազագույն աշխատավարձերն ու թոշակները, որքանով են տեսչական ինստիտուտները երաշխավորում աշխատանքային և տնտեսական հարաբերություններում օրենքի գերակայությունը: Պետության նպատակը մարդու կյանքի որակի բարձրացումն է, և այն պարտավոր է ապահովել, որ տնտեսությունը ծառայի հանրությանը, այլ ոչ թե հանրությունը ծառայի տնտեսությանը: Կառավարությունը մոլորեցնում է հասարակությանը, պնդելով, իբր երեք ու կես օր ավել աշխատելով ավելի լավ կյանք կունենանք»:

<https://hetq.am/hy/article/137148>

25.10.2021

Թուրքը՝ գլխներիս նստած, արոտը չկա, խոտհարքը չկա, անասունը չկա, նստեն այստեղ, ի՞նչ անեն. Կուրթի գյուղապետ

Գեղարքունիքի մարզի սահմանամերձ Կուրթ գյուղից հունիսի 5-ից ադրբեջանցիների վերահսկողության տակ անցած 80 կովերի համար ոչ մի փոխահատուցում չի տրվել, ոչ էլ կովերն են վերադարձվել: Այս մասին NEWS.am -ի հետ զրույցում Կուրթ գյուղի ղեկավար Սիմա Չիտչյանը:

«Գյուղացիները հիմա կարտոֆիլի բերքահավաքով են զբաղված, գնում են կողքի համայնքներ, կարտոֆիլ են հավաքում գումարով, ու դեռ սպասում են փոխահատուցման: Եթե փոխահատուցում չլինի, ինչո՞վ ապրեն. թուրքը գլխներիս նստած, արոտը չկա, խոտհարքը չկա, անասունը չկա, նստեն այստեղ, ի՞նչ անեն: Մինչևի հիմա մեր գյուղացիները անասնապահությամբ են զբաղվել, այլ գործ գյուղում չկա էլ, որ անեն, կարողանան ապրել», - ասաց նա:

Նշենք, որ ադրբեջանցիների վերահսկողության տակ անցած 80 կովը պատկանում էին 5 ընտանիքի:

Համայնքապետը նշեց, որ խոտհարքներից չեն կարողացել բավարար քանակությամբ անասնակեր բերել, արոտավայրեր էլ չեն եղել նորմալ, գյուղացիները աշնանը մորթել են անասունների մի մասը, որպեսզի կարողանան մի փոքր մասն էլ պահել. «1000-1100 դրամով ենք միսը ծախել: Ոնց ադրբեջանցիները հայտնվել են գյուղի մոտ մեր կյանքը դժվարացել է, չգիտեմ էլ հետոն ոնց է լինելու»:

Կուրթի համայնքապետը նշեց, որ այս պահին համեմատաբար հանգիստ է, կրակոցներ այդքան էլ չեն լսում:

Հիշեցնենք, որ մայիսի 12-ից թշնամին խախտելով հայ-ադրբեջանական սահմանը՝ Սյունիքի և Գեղարքունիքի հատվածներում մի քանի կիլոմետր առաջ է եկել՝ պատճառաբանելով, թե իր տարածքներն են եւ չի հեռանալու: Գեղարքունիքի մարզում թշնամին առաջ է եկել Կուրթ, Ազատ, Նորաբակ և Վերին Շորժա գյուղերի ուղղությամբ:

<http://yerkir.am/news/view/251398.html>

24.10.2021

Գրիշա Բալասանյան

Հայտնի չէ, թե քանի հաստիք կկրճատվի համայնքների միավորումից հետո

Ներկայում ընթացքի մեջ գտնվող վարչատարածքային փոփոխությունների 5-րդ փուլում միավորվող համայնքների հաստիքների հետագա կրճատման, ինչպես նաև այդ կրճատումների հետևանքով բյուջեի վերաբաշխումների վերաբերյալ որեւէ գնահատական (թվային կամ տոկոսային) Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը տալ չի կարող:

Նախարարի տեղակալ Վաչե Տերտերյանը, «Հետք»-ի գրավոր հարցին ի պատասխան, հայտնել է, որ հաստիքների վերաբաշխումն իրականացնելու են միավորված համայնքների ավագանիները, որոնք ձևավորվելու են դեկտեմբերի 5-ին կայանալիք ընտրությունների արդյունքում:

[Հիշեցնենք](#), որ կառավարությունը 2021 թ. սեպտեմբերի 8-ի նիստում ընդունեց որոշում, որով առաջարկում էր 441 համայնքի միավորմամբ ձևավորել 37 համայնք: Օրենքի նախագիծն Ազգային ժողովն ընդունեց սեպտեմբերի 24-ին:

Մինչ այդ կառավարությունն արդեն [ձևավորել էր](#) 54 խոշորացված համայնք՝ միավորելով 400-ից ավելի համայնք: Այս համայնքներից և ոչ մեկում չի անցկացվել [տեղական հանրաքվե](#):

Համայնքների խոշորացման գործընթացն ավարտին հասցնելու նպատակով որոշվեց երեք փուլով իրականացնել տարածքային ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Հոկտեմբերի 17-ի ընտրություններն արդեն կայացել են, սպասվում են ընտրություններ նաև նոյեմբերի 14-ին և դեկտեմբերի 5-ին:

Վաչե Տերտերյանը հավաստիացնում է, որ ընտրություններից հետո ձևավորված ավագանին կորոշի, թե որ համայնքում ինչ հաստիք է անհրաժեշտ:

«Այդ ընթացքում ավագանին առաջնորդվելու է առկա կարիքներով, և յուրաքանչյուր համայնքում որոշումները կայացվելու են խիստ անհատական մոտեցմամբ», - հավաստիացնում է նախարարի տեղակալը:

Վաչե Տերտերյանի փոխանցմամբ՝ միավորվող համայնքների ներկայիս վարչական հաստիքների մի մասը փոխարինվելու է ծառայություններ մատուցող հաստիքներով, օրինակ՝ գյուղատնտես, անասնաբույժ, վարորդ, մեխանիզատոր, տրակտորիստ, դաստիարակ, դայակ, բուժքույր և այլն:

Հարցրել էինք նաև, թե նախորդ միավորումների ժամանակ քանի՞ հաստիք է կրճատվել համայնքներում և քանիսն ավելացել: Ըստ նախարարի տեղակալի՝ 2021թ. հունվարի 1-ի դրությամբ նախկինում միավորված համայնքների աշխատակազմերից կրճատվել է մոտ 1400 հաստիք, փոխարենը ստեղծվել է 1200 նոր հաստիք:

Փաստացի 200 հաստիք այդպես էլ չի վերականգնվել խոշորացված համայնքներում:

2021թ. հուլիսի 1-ի դրությամբ միավորված համայնքների հաստիքների դիտարկումը ցույց տվեց, որ հիմնականում կրճատվել են վարչական հաստիքները: Մասնավորապես, Ապարան համայնքի 186 հաստիքից մնացել է 121,5-ը: Կրճատվել են նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպություններում (ՀՈԱԿ) աշխատողների հաստիքները՝ 1151-ից դառնալով 114:

Տավուշի մարզի Բերդ համայնքում խոշորացումից առաջ եղել է 217 վարչական հաստիք, խոշորացումից հետո մնացել է 95-ը: Այս համայնքում ՀՈԱԿ-ում աշխատողների հաստիքները չեն փոխվել՝ 18:

Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 116 վարչական հաստիքից մնացել է 65-ը: 7,05 հաստիք կրճատվել է նաև ՀՈԱԿ-ներում:

Մակայն, կան համայնքներ, որտեղ շեշտակի ավելացել է ՀՈԱԿ-ների հաստիքների թիվը՝ ի տարբերություն վարչական հաստիքների կրճատման:

Մասնավորապես, նույն մարզի Կապան համայնքում կրճատված 84,17 վարչական հաստիքների դիմաց 110,15-ով ավելացել է ՀՈԱԿ-ների հաստիքների թիվը: Մեկ այլ դեպքում՝ Տավուշի մարզի Դիլիջան համայնքում կրճատվել է 35 վարչական հաստիք և 107,71-ով աճել ՀՈԱԿ-ների հաստիքների թիվը և այլն:

Նշենք, որ Ազգային ժողովում համայնքների միավորման նախագիծը ներկայացրել էր տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը: [Անդրադառնալով](#) հնչող

մտահոգություններին՝ արդյոք փակվելու են համայնքապետարանները, նա բացասական պատասխան էր տվել:

«Իհարկե չենք փակում: Բոլոր համայնքապետարաններում առնվազն 2 աշխատակից կլինի՝ մեկը վարչական ղեկավար, մյուսը՝ օպերատոր: Իսկ խոշոր համայնքներում կլինի 2-ից ավելի աշխատող, դա կորոշեն համայնքապետն ու ավագանին», - ասել է նախարարը:

<https://hetg.am/hy/article/137049>

23.10.2021

«Փաստ». Ովքե՞ր և ինչո՞ւ են «բզբզում» ձկնորսության թեման

«Փաստ» օրաթերթը գրում է. «Նախօրեին Գեղարքունիքի մարզի մի խումբ ձկնորսներ փակել էին Երևան-Սևան մայրուղին՝ դժգոհելով, որ իրենց թույլ չեն տալիս ձուկ որսալ Սևանից: Նրանք նշում էին, որ սահմանված չափաքանակը լրացել է, իրենք շարունակել են ձկնորսությամբ զբաղվել, բայց ձկնորսական նավակները ուժով հեռացրել են տարածքից: Ձկնորսները դժգոհում էին նաև սահմանված չափաքանակից, քանի որ, իրենց խոսքերով, հազիվ 4-5 ձուկ են կարողացել որսալ՝ ընտանիք պահելու համար:

Այստեղ առկա է խնդիր, որը միաշերտ չէ: Մի կողմից՝ իհարկե, կարևորագույն հարց է սոցիալական գործոնը, քանզի տարածաշրջանի բնակչության մի մասը հենց ձկնորսությամբ է ապրում: Մյուս կողմից՝ ոչ պակաս առաջնային նշանակություն ունի Սևանա լճում կենսապաշարի արդյունագործական նպատակով օգտագործման կանոնակարգված իրականացումը, ինչպես նաև ապօրինի ձկնորսության դեմ պայքարը:

«Փաստ» թերթի տեղեկություններով, այս երկու խնդրի միջև «գործում» են որոշակի շրջանակներ, որոնք մի կողմից՝ շահարկելով սոցիալական գործոնը՝ «բզբզում» են թեման, այդ թվում՝ կազմակերպելով նաև «ճանապարհի փակում» օպերացիան, մյուս կողմից՝ փորձում են «կոտրել» շրջակա միջավայրի նախարար Ռոմանոս Պետրոսյանին, որը փաստացի պատերազմ է հայտարարել անօրինական ձկնորսությանը:

Ի դեպ, նշենք, որ 2020 թվականին ընդունվել են իրավական ակտեր, որոնք միտված են կանոնակարգել վերը նշած ոլորտը: Հաշվի առնելով սիգի որսի հետ կապված նշյալ կարգավորումները՝ ՇՄ նախարարությունը այս տարի ևս նախաձեռնել էր սիգի արդյունագործական որսի երկրորդ փուլ, որի վերջնաժամկետ էր սահմանվել հոկտեմբերի 15-ը: Այսինքն, այստեղ գործ ունենք ոչ միայն սահմանաչափի, այլև կոնկրետ ժամկետի հետ, ինչի մասին նախապես հայտարարված է եղել:

Միայն թե անհասկանալի է, թե ինչ 4-5 օրվա ժամկետ էր ուզում Գեղարքունիքի մարզպետը, եթե նաև ինքը պետք է տեղյակ լիներ, որ հոկտեմբերի 15-ից այլևս սիգի արդյունագործական որս չի կարող իրականացվել»:

<https://news.am/arm/news/668873.html>

ՄԻՊ-ը հրապարակում է ապացույցներ Գեղարքունիքի գյուղերի հարևանությամբ աղբբեջանական զինված ուժերի ամրացման վերաբերյալ

ՀՀ պաշտպանության նախարարությունը հոկտեմբերի 19-ի [սպառզանմամբ հերքել է](#) ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հոկտեմբերի 18-ի հայտարարությունն այն մասին, որ ՀՀ Գեղարքունիքի մարզ ապօրինի (unlawful) ներխուժած աղբբեջանական զինված ուժերը ՀՀ գյուղերի անմիջական հարևանությամբ իրականացնում են ամրացման ակտիվ, այդ թվում՝ ճանապարհների կառուցման աշխատանքներ, կուտակել են մեծ քանակությամբ վառելափայտ և այլն:

Մրանից հետո փաստացի սկսվել է ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը վարկաբեկող արշավ, որին միացել է նաև ԱԱԽ քարտուղարը:

Նախ, Մարդու իրավունքների պաշտպանի հոկտեմբերի 18-ի հայտարարության պատճառն այն էր, որ աղբբեջանական զինված ուժերի արարքներով կոպտորեն ոտնահարված են ՀՀ քաղաքացիական բնակչության կյանքի, անվտանգ ու խաղաղ կյանքի, սեփականության և մյուս կենսական իրավունքները (գնդակոծվում է քաղաքացիական բնակչությունը, մարդիկ չեն կարողանում օգտվել իրենց հողատարածքներից և այլն): Պաշտպանին են շարունակում հասցեագրվել քաղաքացիների բազմաթիվ ահազանգեր ու բողոքներ:

Մարդու իրավունքների պաշտպանի ինչպես այս, այնպես էլ ցանկացած այլ հայտարարություն հիմնված է փաստահավաք աշխատանքների հավաստի տվյալների վրա:

Հոկտեմբերի 18-ի հայտարարության նպատակն էր ցույց տալ աղբբեջանական զինված ուժերի անօրինական արարքները և այդ արարքների անմիջական կապը ՀՀ քաղաքացիական բնակիչների կյանքի, սեփականության և կենսական մյուս իրավունքների խախտումների հետ: Հարցն այն է, որ հենց նման արարքներին են հաջորդում նրանց հետագա հանցավոր, այդ թվում՝ ահաբեկչական գործողությունները քաղաքացիական բնակչության և զինծառայողների վրա, որ պաշտպանում են հենց այդ բնակչության կյանքի, անվտանգ ու խաղաղ ապրելու և այլ կենսական իրավունքներ:

Ընդ որում, նշված հայտարարության հիմքում դրված էին փաստեր, որոնք Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը հետևողականորեն հավաքագրել է վերջին ամիսների ամենօրյա մշտադիտարկումների և ահազանգերի ուսումնասիրությունների արդյունքներով:

Հետևաբար, Պաշտպանության նախարարության վարչական ապարատի այն պաշտոնյաները, որոնք որոշում են կայացրել հոկտեմբերի 19-ին հանդես գալ աղբբեջանական զինված ուժերի անօրինական արարքների վերաբերյալ Մարդու իրավունքների պաշտպանի փաստահավաք աշխատանքների արդյունքները կասկածի տակ դնող հայտարարությամբ, պետք է միշտ հիշեն, որ Պաշտպանը երբեք չի անում հայտարարություններ, որոնք ուռճացված են կամ առավել ևս ունեն անճշտություններ:

Առեսարակ, եթե Մարդու իրավունքների պաշտպանը հանդես է գալիս հրապարակային որևէ հայտարարությամբ, ուրեմն դրա համար ունի հավաստի ապացույցներ՝ ոչ թե մեկը, այլ առնվազն մի քանիսը: Ուստի, նախարարության այդ պաշտոնյաներից պահանջում ենք այլև թույլ չտալ նման անհեռատես ձևակերպումներ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հայտարարություններին արձագանքելիս:

Ավելին, քաղաքական դժգոհությունները մեղմելու նկատառումով Մարդու իրավունքների պաշտպանի հոկտեմբերի 18-ի ճշգրիտ հայտարարությունը հերքելու փոխարեն, Պաշտպանության

նախարարության նշված պաշտոնյաները պետք է գիտակցեին, որ ոչ միայն հերքում են մարդու իրավունքների պաշտպանությանն ուղղված ճշգրիտ հայտարարություն, այլ հատկապես միջազգային հարթակներում գեներացնում են աղբյուրազանց արշավ ոչ միայն այդ հայտարարության, այլ նաև Պաշտպանի աշխատանքի հավաստիության դեմ, առհասարակ:

Եվ իսկապես՝ ՀՀ պաշտպանության նախարարության հոկտեմբերի 19-ի հերքումն հոգուտ իրենց օգտագործելով՝ աղբյուրազանց տեղական ու արտասահմանյան աղբյուրներով հայտարարություններ են արվել այն մասին, որ ՀՀ ՊՆ-ն է պաշտոնապես հավաստում, որ սահմանային բնակիչների իրավունքներին վերաբերող ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի զեկույցները կամ պնդումները կեղծ են և, դիմելով տարբեր աստիճանների, պահանջել են Պաշտպանի զեկույցներն ու հայտարարություններն այլևս հիմք չընդունել:

Ստացվում է՝ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը պարտադրված է Պաշտպանության նախարարության վարչական ապարատի պաշտոնյաների հրապարակային պարզաբանել, որ իր զեկույցները, հայտարարությունները կազմվում ու հրապարակվում են հատուկ սկզբունքներով, որ հաշվի են առնվում այդ պահի միջազգային աստիճաններում մարդու իրավունքների պաշտպանության հնարավորությունները, որ Մարդու իրավունքների պաշտպանի ամեն խոսքն ունի իր արժեքը և որ դրանք հենց զինձառայողների իրավունքները պաշտպանելու, Ձինված ուժերին ու երկրին աջակցելու համար են:

Ուստի, պետք է նկատի ունենալ, որ Պաշտպանի զեկույցներն ու հայտարարություններն արվում են, անգամ եթե դրանք կարող են քաղաքական դժգոհությունների առիթ դառնալ, բայց փոխարենը դրանք դառնում են ՀՀ քաղաքացիների իրավունքների պաշտպանության համար արժեքավոր աղբյուր՝ օգտագործվելով միջազգային աստիճաններում, ինչպես օրինակ՝ ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանն է, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը և այլն:

Պաշտպանի զեկույցներն ու հայտարարությունները մշտապես հիմնված են առաջնային աղբյուրների, ոչ թե միջնորդավորված ու աղճատված տվյալների վրա: Դրանք հենց արժեքավոր են նրանով, որ անկախ աշխատանքների արդյունք են:

Ի վերջո, պատերազմից հետո ընկած ողջ ժամանակահատվածում Պաշտպանության նախարարությունը գոնե կարող էր ինչ-որ կերպ աջակցել Արբեջանի հետ սահմանների շուրջ անվտանգության գոտի ստեղծելու Մարդու իրավունքների պաշտպանի առաջարկին, որ ավելի է տարածում ստանում միջազգային հարթակներում: Չէ՞ որ դա աղբյուրազանց հանցավոր արարքներից ՀՀ քաղաքացիական բնակչության ու զինձառայողների կյանքի և մյուս իրավունքների պաշտպանության համար է:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը միշտ է իր հրապարակային ու ոչ հրապարակային գործունեությամբ աջակցել Ձինված ուժերին և շարունակելու է նույն սկզբունքով գործելը: Որևէ անգամ թույլ չի տրվել, որ սովորվի մեր պետականության բարձրագույն արժեքներից մեկի՝ Ձինված ուժերի դերը՝ դրականը միշտ ներկայացնելով նաև տարբեր աստիճաններում: Ողջ գործունեության ընթացքում մշտապես ապահովվել է գործընկերային աշխատանք՝ չվնասելու սկզբունքով և նույնն էլ ակնկալում է փոխադարձ:

Իսկ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի հոկտեմբերի 18-ի հայտարարությունը վերաբերում էր բացառապես աղբյուրազանց հանցավոր արարքներին. այն որևէ անդրադարձ չի կատարել ՀՀ դիրքերում անձնվիրաբար ծառայող զինվորականներին:

Գեղարքունիքի նորանշանակ մարզպետին էլ առաջարկում ենք իրազեկման նպատակով հնարավորինս լավ ուսումնասիրել Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի գործունեության սկզբունքները, աշխատանքի արդյունքներն ու տեղում առկա իրավիճակը և մյուս անգամ անհավաստի տվյալների հիման վրա չփորձել կասկածի տակ դնել Պաշտպանի հայտարարությունները կամ զեկույցները: Հուսով ենք՝ գոնե նվազագույն մակարդակով կպահպանվի համագործակցության այն բարձր որակը, որ ձևավորված էր նախորդ մարզպետի պաշտոնավարման ժամանակ և ապահովում էր մարդու իրավունքների պաշտպանության դրական արդյունքներ:

Սույն հայտարարությամբ հրապարակում եմ ընդամենը մի քանի հավաստի ապացույց՝ կարճ տեսանյութի ձևով, որ հաստատում են ՀՀ ինքնիշխան տարածք՝ Գեղարքունիքի մարզ ադրբեջանական ապօրինի (unlawful) ներխուժումները, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի գյուղերի անմիջական հարևանությամբ նրանց զինձառայողների ամրացման աշխատանքները:

Արման Թաթոյան

Մարդու իրավունքների պաշտպան

Տեսանյութը՝ <https://www.facebook.com/100017676420633/posts/950925535506652/?d=n>:

<https://hetq.am/hy/article/136993>

21.10.2021

Կառավարությունը, գործատուները և աշխատողները պետք է գիտակցեն, որ հարկադիր պատվաստման հարցը այլևս վեճ է ՄԴ-ում. Արամ Վարդևանյան

Աժ պատգամավոր, իրավաբան Արամ Վարդևանյանը ֆեյսբուքյան իր էջում գրել է.

«Միրելի հայրենակիցներ,

Հիշեցնեմ, որ մեր կողմից անհապաղ արձագանք էր տրվել հանրության հիմնավոր և օբյեկտիվ բողոքին Առողջապահության նախարարի հայտնի հրամանի մասով, որով այն փաստացի վերածվել էր ՀԱՐԿԱԴԻՐ պատվաստման գործընթացի: Մեր կողմից ներկայացվել էր ՄԴ դիմում և միջնորդություն որպեսզի ակնհայտ հակասահմանադրական հրամանը կասեցվի:

Սահմանադրական դատարանը վարույթ է ընդունել մեր դիմումը, որոշել է այն քննության առնել ԲԱՆԱՎՈՐ ընթացակարգով, քննության օր է նշանակվել բավականին սեղմ ժամկետ այն է նոյեմբերի 25-ը: Կասեցման միջնորդությունը չնայած դրա հստակ հիմնավորվածությանը, բավարար կողմ ձայներ ՄԴ-ում չի հավաքել: Մեկ անգամ ևս ուզում եմ կարծիքս ասեմ. Ես կողմ եմ պատվաստմանը, դեմ եմ հարկադրանքին:

Դեմ եմ որպեսզի կառավարությունը իր պարտականությունը հետազոտման ծախսերի փոխհատուցման՝ թողնի ժողովրդի վրա, սպառնալիքով խոսի ժողովրդի հետ, պարզ ու անկեղծ կոմունիկացնելու փոխարեն: Փաստ է, որ այսօրվա համաշխարհային առողջապահական համակարգը, կորոնավիրուսային համավարակի ու այս չարիքի դեմ, ավելի լավ լուծում քան պատվաստումն է՝ չունի, սակայն հարկադրանքի, հավելյալ ծախսեր ստեղծելու, կամ սպառնալիքի պայմանները ևս անընդունելի են:

Կառավարությունը, գործատուները և աշխատողները պետք է գիտակցեն, որ այլևս այս հարցը ՎԵՃ է Սահմանադրական դատարանում»:

20.10.2021

Գեղարքունիքի բնակիչները փակել էին Երևան-Սևան մայրուղին՝ ձկնորսություն թույլատրելու պահանջով

PanARMENIAN.Net - Գեղարքունիքի մարզի բնակիչները փակել էին Երևան-Սևան մայրուղին: Ակցիայի մասնակիցները **դժգոհում էին ձկնորսության արգելքի դեմ**, մասնավորապես, Սևանում արդյունագործական ձկնորսություն անցկացնելու որոշման պատճառով յուրաքանչյուր նավի անձնակազմ օրական կարող է որսալ ընդամենը 3-4 ձուկ, որով ձկնորսները պետք է ընտանիք պահեն, հարկ վճարեն՝ որպես բնավճար:

«Ապրիլից մինչև հոկտեմբերի 15-ը դուրս է եկել մոտ 10,000 տոննա ձուկ, որից պետությանն է փոխանցվել մոտ 350 տոննա ձկան գումար՝ բնավճարի գումար: Մինչդեռ կարելի էր և այդ 10,000 տոննայի բնավճարը վերցնել, և 10-15 հազար դրամները՝ կախված ձկան արժեքից», - նշել է ակցիայի մասնակիցը, [գրում է](#) «Փաստինֆոն»:

Ակցիայի մասնակիցներին հանդիպել է Գեղարքունիքի **մարզպետ Կարեն Սարգսյանը**: Նա նշել է, որ ոչ նախարարը, ոչ մարզպետը կառավարության որոշումը չկատարելու իրավունք չունեն:

«Եթե դուք հիմա առաջարկում եք, որ կառավարության որոշումը չեղարկվի կամ փոփոխություն արվի, դրա համար ժամանակ է պետք: Բոլորդ տեղյակ եք եղել, որ սահմանված չափաքանակ է տրվել», - նշել է մարզպետը:

Ակցիայի մասնակիցները միջամտել են՝ թույլ չտալով մարզպետին ավարտել խոսքը, ինչն էլ վերածվել է **վիճաբանության**: Մասնավորապես, մարզպետը խնդրել է, որ իրեն թույլ տան խոսի, ինչին ի պատասխան ձկնորսներից մեկը նշել է, թե իրենք շատ են լսել, հիմա եկել են, որ իրենց լսեն:

ՀՀ շրջակա միջավայրի նախարարությունը հայտարարություն է տարածել՝ պատասխանելով ձկնորսների կողմից իրականացված բողոքի ակցիային: Նախարարությունը նշել է, որ պետք է **հարգել արդյունագործական որսի թույլատրելի չափաքանակների** և ժամկետների վերաբերյալ կառավարության որոշումը, որը հիմնված է Գիտությունների ազգային ակադեմիայի կողմից Սևանա լճում սիգի ընդհանուր զանգվածի հաշվառման տվյալների վրա:

Նախարարությունից հիշեցրել են, որ, համաձայն Գիտությունների ազգային ակադեմիայի 2020 թ. հաշվառման տվյալների, Սևանա լճում սիգի ընդհանուր զանգվածը կազմել էր 2345 տոննա, որից արդյունագործական ընդհանուր պաշարը՝ մոտ 586,2 տոննա, որից սիգի փորձարարական որսի 2-րդ փուլի շրջանակում 2021 թ. օգտագործման համար սահմանվել էր առավելագույնը 250 տոննա չափաքանակ:

«Հաշվի կառնվեն մեր հայրենակիցների մտահոգությունները: Բայց պետք է գիտակցել նաև, որ այս կարգավորումներն ունեն կարևոր նպատակ՝ կանխել ապօրինի ձկնորսությունը և ձկնապաշարների վերականգնման միջոցով վերականգնել Սևանա լճի էկոհամակարգը», - նշել են նախարարությունից:

Կառավարության սեպտեմբերի 2-ի որոշումը 2021 թվականի համար սիգի արդյունագործական նպատակներով չափաքանակը ավելացվեց ևս 50 տոննայով և որսի իրականացման ժամկետը երկարաձգվեց մինչև ս.թ. հոկտեմբերի 15-ը՝ հնարավորություն

ընձեռնելով օրինապահ ձկնորսներին սահմանված կարգավորումներին համապատասխան իրականացնել սիգի արդյունագործական որս:

<https://panarmenian.net/arm/news/296244>

19.10.2021

«Ժողովուրդ». Գեղարքունիքի մարզպետարանից եկածները նախարարությունում նոր պաշտոններ են ստանում

«Ժողովուրդ» օրաթերթը գրում է. «ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նորանշանակ նախարար Գնել Սանոսյանը նախարարության կարելորագույն կադրերին նշանակում է Գեղարքունիքի մարզպետարանից եկածներին: Նախկին մարզպետը մարզպետարանի գրեթե ողջ կազմին՝ ընկեր, ծանոթ, հարազատներ, պաշտոնների է նշանակում ՏԿ նախարարությունում: Նա իրեն տեղակալ է նշանակել Նարեկ Մանուկյանին, որը Սանոսյանի հետ աշխատել է մարզպետարանում ու իր մտերիմ ընկերներից է:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ հիմա էլ մարզպետարանից պատրաստվում են նախարարության համար աշխատակազմի ղեկավար-քարտուղար բերել: Նախարարությունում սպասումների մեջ են, քանի որ Սանոսյանի բերած գրեթե բոլոր կադրերը անփորձ են ու անտեղյակ ոլորտից, իսկ նշված պաշտոնը շատ կարելու է բոլոր գերատեսչությունների համար: Իշխանության մեր աղբյուրները փոխանցում են, որ Սանոսյանն իր մտերիմ շրջապատում ասել է, որ նախարարությունում կադրային փոփոխությունները առաջիկայում շարունակելու է, քանի որ չի վստահում գործողներին: Մի խոսքով, Սանոսյանը առաջիկայում պատրաստվում է իր ղեկավարած գերատեսչությունը «մաքրել» թիմակից նախկիններից ու բերել իր համար հավատարիմներին»:

<https://lurer.com/?p=437723&l=am>

19.10.2021

ՊՆ. «ՄԻՊ-ի գրառման մեջ առկա են մի շարք անճշտություններ»

Պաշտպանության նախարարությունը հայտնում է, որ հոկտեմբերի 18-ին ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի կողմից [կատարվել է գրառում](#), որում անդրադարձ կա ա.թ. մայիսին Գեղարքունիքի մարզի որոշ հատվածներ ներթափանցած ադրբեջանական ԶՈՒ ներկայացուցիչների կողմից տվյալ տարածքներում իրականացվող ամրաշինական և այլ աշխատանքների հետ: Նշված գրառման մեջ առկա են մի շարք անճշտություններ, ինչպես նաև պնդումներ, որոնք կտրված են իրականությունից:

«Մասնավորապես, ՄԻՊ գրառման մեջ նշվում է, որ «ՀՀ Գեղարքունիքի մարզ ներխուժած ադրբեջանական զինված ուժերը կառուցել են մեծ ապաստարաններ, կուտակել են մեծ քանակությամբ վառելիքայտ, բետոնապատել են իրենց դիրքեր տանող ճանապարհները: Նրանց ակտիվությունը վերջին շրջանում շեշտակի է մեծացել: Ավելին, շարունակում են նոր ճանապարհների կառուցումը, դիրքերում ավելացրել են զինձառայողների քանակն ու

սպառազինությունը: Անընդհատ կատարում են դիրքային ամրացման և ինժեներական ակտիվ աշխատանքներ»:

ՄԻՊ գրառման մեջ առկա այս պնդումներն ակնհայտորեն ուռճացված են, քանի որ ադրբեջանական ՋՈՒ ստորաբաժանումների կողմից ինժեներական ակտիվ աշխատանքներ չեն իրականացվում, մեծ ապաստարաններ, կամ նոր ճանապարհներ չեն կառուցվել, ավելին՝ նրանց կողմից այդպիսի աշխատանքների փորձերը հաջողությամբ կանխվում են ՋՈՒ ստորաբաժանումների կողմից: Ինչ վերաբերում է ադրբեջանական զինծառայողների թվաքանակի և սպառազինության ավելացման մասին պնդմանը, ապա հարկ ենք համարում նշել, որ ադրբեջանական զինծառայողների ամբողջ շարժը վերահսկվում է հայկական ՋՈՒ ստորաբաժանումների կողմից և, վերջին շրջանում, նման գործընթաց չի արձանագրվել:

Կոչ ենք անում մեր հասարակության համար զգայուն թեմաների շուրջ նմանատիպ գրառումներ կատարելիս փաստական տվյալները ճշտել նաև պաշտպանական գերատեսչության հետ, որը, ինչպես ամբողջ այս ընթացքում, այնպես էլ հետագայում, պատրաստ է ամենասերտ համագործակցության ՄԻՊ գրասենյակի հետ»,- ասված է ՊՆ պարզաբանման մեջ:

<https://hetq.am/hy/article/136879>

18.10.2021

Գեղարքունիքի մարզ ներխուժած Ադրբեջանի ՋՈՒ-երը կառուցել են մեծ ապաստարաններ, բետոնապատել են ճանապարհները. ՄԻՊ

ՀՀ Գեղարքունիքի մարզ ներխուժած ադրբեջանական զինված ուժերը կառուցել են մեծ ապաստարաններ, կուտակել են մեծ քանակությամբ վառելիքայտ, բետոնապատել են իրենց դիրքեր տանող ճանապարհները:

Հայաստանի ՄԻՊ-ից [NEWS.am](https://www.news.am)-ին հայտնում են, որ նրանց ակտիվությունը վերջին շրջանում շեշտակի է մեծացել:

Ավելին, շարունակում են նոր ճանապարհների կառուցումը, դիրքերում ավելացրել են զինծառայողների քանակն ու սպառազինությունը: Անընդհատ կատարում են դիրքային ամրացման և ինժեներական ակտիվ աշխատանքներ:

Խոսքը ՀՀ ինքնիշխան տարածքում ադրբեջանական անօրինական տեղակայման ու հանցավոր արարքների մասին է:

Նրանք ֆիզիկապես ներկա են հենց այն հողատարածքներում, որոնք պատկանում են ՀՀ քաղաքացիներին՝ օրինական փաստաթղթերով հաստատված իրավունքներով:

Այս տվյալները ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի, այդ թվում՝ Գեղարքունիքի մարզային ստորաբաժանման փատահավաք աշխատանքների շրջանակում հաստատվել են հավաստի ապացույցներով ու մի քանի աղբյուրով ստուգված տվյալներով:

Սրանք ադրբեջանական այն դիրքերն են, որտեղից ադրբեջանական զինծառայողները ՀՀ քաղաքացիական բնակչության նկատմամբ կատարում են ահաբեկչական հանցավոր արարքներ. պարբերաբար կրակում են Գեղարքունիքի Վերին Շորժա, Սոթք, Կուլթ և մյուս գյուղերի ու մասնավորապես՝ քաղաքացիական տների վրա, զանգվածաբար հրդեհում քաղաքացիական

բնակիչների արտավայրերն ու խոտհարքները: Այս դիրքերի ծառայողներն են կատարել ՀՀ բնակիչների կենդանիների մեծաքանակ գողություններ:

Ադրբեջանական զինված ուժերի ներկայությունը ՀՀ գյուղերի հարևանությամբ ու այն էլ ՀՀ ինքնիշխան տարածքում բացահայտ հանցավոր բնույթի է, այն ինքնին ոտնահարում է գյուղերի բնակիչների կյանքի ու անվտանգ ապրելու, սեփականության, ընտանիքի եկամուտը վաստակելու և այլ կենսական իրավունքներ: Նրանց ներկայությունը խաթարում է մարդկանց խաղաղ կյանքը:

Ուստի, պետք է անհապաղ սկսվի ՀՀ սահմանների շուրջ անվտանգության ապահովման նպատակով գոտի ստեղծելու և ադրբեջանական զինված ծառայողներին ՀՀ գյուղերի հարևանությունից, համայնքների միջև ճանապարհներից անհապաղ հեռացնելու գործընթաց:

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի այս առաջարկը տեղ է գտել միջազգային կոնկրետ փաստաթղթում՝ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) 2021թ. սեպտեմբերի 27-ի թիվ 2391 (2021) բանաձևում: Այս մասին Մարդու իրավունքների պաշտպանը համապատասխան հաղորդումներ կուղարկի նաև միջազգային կառույցներին ու ՀՀ պետական մարմիններին, քաղաքացիական հասարակության կազմակերպություններին:

Ակնհայտ է, որ ադրբեջանական հանցավոր արարքների, մարդկանց իրավունքների կոպիտ խախտումների հիմքը, դրանց սնուցման աղբյուրը մեկն է. ադրբեջանական իշխանությունների հայատյաց ու թշնամանքի, էթնիկ գտումների ու ցեղասպան քաղաքականությունը:

<https://news.am/arm/news/667978.html>

12.10.2021

Բուժքույրը պատվաստված լինելու կեղծ հավաստագրեր է տվել. Մարտունու քրեական հետախույզների բացահայտումը

Ոստիկանության Մարտունու բաժնի քրեական հետախույզության բաժանմունքի ծառայողները ծավալուն օպերատիվ-հետախույզական միջոցառումների շնորհիվ պաշտոնեական լիազորությունների չարաշահման վերաբերյալ տեղեկություններ ստացան, որոնք իրացրեցին Գեղարքունիքի մարզային վարչության գործընկերների հետ: Այս մասին հայտնում է Ոստիկանության լրատվական ծառայությունը:

Ձեռք բերված տվյալների համաձայն՝ Երանոս գյուղի բուժամբուլատորիայի բուժքույրներից մեկը գյուղի բնակիչներից մի քանիսին տվել է «COVID-19» համավարակի դեմ պատվաստվելու կեղծ հավաստագրեր, այն պարագայում, երբ այդ անձինք չեն պատվաստվել: Բուժքույրը բերման է ենթարկվել ոստիկանության Մարտունու բաժնի ու խոստովանական բացատրություն տվել:

Օպերատիվ-հետախույզական ու քրեադատավարական միջոցառումները շարունակվում են: Այս համատեքստում ոստիկանության պայքարը հետևողականորեն շարունակվելու է:

<https://www.pastinfo.am/hy/news/2021/10/12/e8hzqx602/1284751>

11.10.2021

Հունվարի 1-ից կարգելվի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակների իրացումը

2022 թ. հունվարի 1-ից Հայաստանում կարգելվի մինչև 50 միկրոն հաստությամբ պոլիէթիլենային տոպրակների իրացումը

Պլաստիկը բնության համար դժվարամարս է ու հակառակ դրան, մարդկության կողմից խիստ առատ սպառվող: Տարեկան մոտ 5 տրիլիոն պոլիէթիլենային տոպրակ են օգտագործում ամբողջ աշխարհում: Դրանց մի մասը չի վերացվում՝ կուտակվում է օվկիանոսում, մնում ցամաքում ու զգալի վնաս հասցնում թե կենդանական ու բուսական աշխարհին, թե մարդու առողջությանը:

Շրջակա միջավայրի նախարարությունից [NEWS.am](https://news.am)-ին հայտնում են, որ Ամանոբից հետո Հայաստանը կարգելի մինչև 50 միկրոն հաստության պոլիէթիլենային տոպրակների վաճառքը: Օրենսդրական փոփոխություններն արված են, տնտեսվարողների հետ աշխատանք տարվում է, և պետք է ամեն ինչ անել 2022 թվականի հունվարից օրենքի պահանջները պատշաճ կարգով կատարելու համար:

https://news.am/arm/news/666887.html?fbclid=IwAR0xYYJ3_-feEJyayiPfZaz0yhqmN4BVXfCmxW6M60nHTRYLpaXtZvcN02c

06.10.2021

Սառա Պետրոսյան

Գնել Սանուայանը վստահեցնում է, թե համայնքների խոշորացման հիմքում անձնական դրդապատճառներ չկան

Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանուայանի հետ գրուցել ենք համայնքների խոշորացման նոր նախագծերի, բարձրաստիճան պաշտոնյաների համար արված բացառությունների և համայնքները միավորելու վերջնական նպատակներին այդպես էլ չհասնելու պատճառների մասին:

Պրն Սանուայան, ի՞նչ սկզբունք է դրվել համայնքների վարչական բաժանման նախագծերի հիմքում, և ի՞նչ խնդիր է ցանկանում լուծել Կառավարությունը՝ համայնքները միավորելու այս տարբերակով:

Սկզբունքը քննարկելիս փորձել ենք հաշվի առնել, թե հիմնականում ինչ խնդիրներ և խոչընդոտներ կան, որ եղած համակարգը երբեմն իրեն չի արդարացնում: Մյուս կողմից՝ փորձել ենք հասկանալ, թե մեր պետական այլ կառույցները, գերատեսչություններն ինչպիսի բաշխվածություն կամ կառուցվածք ունեն, և համայնքներն ինչպես են նրանց հետ առնչվում: Օրինակ՝ վաղուց խորհրդային շրջանները չկան, բայց պետական մի շարք գերատեսչությունների կառուցվածքը հենց այդպիսին է: Օրինակ՝ ոստիկանության բաժինները, որոնք, շրջկենտրոնից բացի, սպասարկում են նախկին շրջանների բոլոր գյուղերը: Արտակարգ իրավիճակների նախարարության տարածքային մասնաճյուղերը, բժշկական ծառայությունները և այլն: Այսինքն, մեր երկրի մի շարք ոլորտներում դեռևս կան համակարգեր, որոնք շրջանային բաշխվածություն ունեն, և դա մեզ համար եղել է կարևոր կետերից մեկը: Մյուս փաստարկն այն է, որ փոքր համայնքները չեն կարողանում իրենց գործունեությունից բխող մի շարք ծառայություններ մատուցել, և համայնքները պետք է միավորել: Ինչպես նաև՝ բնակչության մեջ սովետական շրջանի գաղափարը շատ ամուր է նստած, հաճախ համաձայնություն են տալիս շրջաններով միավորվելուն, և մենք, մեծ հաշվով, գնացել ենք այդ ուղղությամբ:

Որտեղ հնարավոր է՝ վերադարձել ենք սովետական շրջաններին, բայց դա, իհարկե, սովետին վերադառնալու գործընթաց չէ: Դա չի նշանակում նաև, որ մենք ամբողջովին պետք է

վերադառնանք դրան, որի համար երկու պատճառ կա. մեկը՝ չենք կարող ասել, որ դա ժամանակին ճիշտ բաժանում է եղել, բավականին երկար ժամանակ է անցել, և հնարավոր է՝ շատ բաներ փոխված լինեն: Մենք 37 համայնք միավորելու նախագիծ ենք ներկայացրել և դրա գրեթե կեսով շրջանները վերականգնում ենք, բայց ասածներս հաշվի առնելով՝ մի շարք վայրերում շրջանային տարբերակի ենք գնացել, մի շարք վայրերում՝ փնջային տարբերակի:

2015թ.-ին ընդունված վարչատարածքային բարեփոխումների ծրագրի հիմքում դրված էր հայեցակարգ և մեթոդաբանություն՝ համայնքները միավորել փնջային կամ շրջանային մոդելով: Ժամանակին քննարկումներով հավանություն տրվեց միավորման փնջային մոդելին: Ներկայում, երբ չկա լուրջ ուսումնասիրություն, թե ինչ ռիսկեր կան միավորման շրջանային մոդելի դեպքում, ինչը հաջողվեց, ինչը՝ ոչ, միանգամից անցում կատարվեց կրկնակի խոշորացման՝ շրջանային տարբերակով: Նկատի ունենանք, որ ամենալավ ծրագրերն անգամ ռիսկեր ունենում են:

2016-17թթ.-ին համայնքները միավորելու արդյունքներով երկուսն էլ ունենք՝ և՛ փնջային, և՛ շրջանային տարբերակը: Մեր վերլուծությունները, եզրահանգումները բխել են այդ միավորումներից, և փորձը ցույց է տալիս, որ եթե միավորված համայնքում սուբյեկտիվ գործոններ չեն լինում, ինչը, ցավոք, մի շարք տեղերում ունենք, համակարգը բավականին լավ աշխատում է: Հիմա շատ ավելի պատրաստ ենք այս գործընթացին, քան 2016-17թթ.-ին՝ հաշվի առնելով, որ բավականին մեծ փորձ կա, մեթոդական որոշակի աշխատանք է արվել, շատ տեղերում քաղաքացիների սպասարկման գրասենյակներ են ստեղծվել, էլեկտրոնային ծառայությունների համակարգն ավելի շատ ծառայություններ ունի հիմա, քան նախկինում և այլն: Այսինքն, բավականին շատ աշխատանք է կատարվել: Բայց ընդունում ենք, որ համակարգն ամբողջովին պատրաստ չէ ընդունելու և սպասարկելու բոլոր ծառայությունները: Օրինակ՝ 60 պետական ծառայությունից միայն 18-ն է համայնքը կատարում, բայց գործընթացը կա և հույս ունենք, խոշորացման գործընթացին զուգահեռ, ծառայությունների աստիճանը շատ ավելի բարձրացնել:

Կան մարզեր, որտեղ համայնքների միավորումները բացառապես կատարվել են շրջանային մոդելով: Մասնավորապես՝ Գեղարքունիքի մարզը, որ տարածքով ամենամեծն է հանրապետությունում, այստեղ 5 համայնք է ձևավորվել՝ միավորելով նախկին շրջանները՝ Գավառ, Սևան, Վարդենիս, Ճամբարակ և նրանց կողքին՝ նախկինում խոշորացված Շողակաթ համայնքը՝ 6 բնակավայրով (միավորվել է 5 գյուղ Ճամբարակից և 1 գյուղ Վարդենիսից): Ինչո՞ւ Ճամբարակի 5 գյուղը չէք միավորել այդ շրջանի հետ և խոշոր շրջանների կողքին նախկինում փնջային մոդելով միավորված համայնքը թողել եք:

Գեղարքունիքի մարզի պարագայում սա ժամանակավոր լուծում է: Սովետական շրջանում Գեղարքունիքի մարզում 5 համայնք է եղել, և մենք մտադիր ենք մարզում ունենալ 5 համայնք՝ վերականգնելով նախկին սովետական շրջանները: Նախկին Ճամբարակի շրջանը հիմա բաժանված է երկու համայնքի՝ Ճամբարակ և Շողակաթ, երկուսն էլ կայացած համայնքներ են, լավ են աշխատում: Երկու համայնքում էլ ՏԻՄ հերթական ընտրությունները տեղի կունենան 2022թ.-ին, այդ ժամանակ այդ երկու համայնքը կմիավորվի:

Պրն Սանոսյան, նախարարության ներկայացրած նախագծերում կան այլ համայնքներ, որտեղ հերթական ՏԻՄ ընտրությունները հաջորդ տարի են լինելու, բայց այս տարի միավորվում են այլ համայնքների հետ: Ինչո՞ւ նույն սկզբունքը չի գործել բոլորի դեպքում: Երկրորդ՝ Գեղարքունիքի մարզում կա Գեղամասար համայնքը, որի բնակչության համար ընդունելի չէ երկրորդ անգամ Վարդենիս համայնքի հետ միավորվելը: Գեղամասարի բնակիչները նախկին փախստականներն են, և հասկանալի է, որ նրանք նաև մշակութային տարբերություններ, ընդգծված տարաձայնություններ

ունեն վարդենիսցիների հետ: Ինչո՞ւ Շողակաթի համար որդեգրված սկզբունքը չի գործել Գեղամասարի դեպքում, չեք ընդառաջել նրանց:

Ինչո՞ւ ենք որոշել այդ տարածաշրջանում ավելի խոշոր համայնքներ ունենալ: Եթե այդ համայնքը այդ փնջի մի մասն է, ստացվում է, որ երկրորդ անգամ է խոշորացվում: Չգիտես, թե ինչու մենք չենք նշում, որ Վարդենիսն էլ է խոշորացված համայնք, համայնքի ղեկավարը 2019թ.-ին է ընտրվել և բավականին ժամանակ կա, որ այնտեղ հերթական ՏԻՄ ընտրություն լինի: Վարդենիսի տարածաշրջանի մի մասը Վարդենիս և Գեղամասար համայնքներն են, իսկ մյուս համայնքները մնացել են առանձին, որոնց մեջ բավական շատ են փոքր համայնքները, մենք որոշել ենք նոր համայնքային փնջեր չստեղծել: Դրա համար որոշ համայնքներ երկրորդ անգամ են խոշորացվում: Ինչ վերաբերում է Գեղամասարի հետ կապված մյուս հարցին, որ բնակիչները նախկին փախստականներ են, որոշակի առանձնահատկություններ կան, հատկապես այդ առումով շատ ճիշտ է, որ նրանք լինեն մի համայնքում: Որովհետև 30 տարի անց տեղացի և երկվոր, տեղացի և փախստական տարբերակում դնելը ճիշտ չէ: Բոլորը մեր հայրենակիցներն են, արդեն 30 տարի ապրում են այնտեղ և շատ լավ կլինի, որ մեկ միավորված համայնքում համերաշխ կարողանան ապրել: Պետք չէ անընդհատ հիշեցնել, որ նրանք փախստականներ են:

Կարո՞ղ եմ այս դեպքում արձանագրել նաև, որ Շողակաթ համայնքը չմիավորելու դեպքում ՏԿԵ նախարարի նախկին տեղակալ Լիլիա Շուշանյանի գործուն է դերակատարություն ունեցել, քանի որ նրա հայրն է Շողակաթ համայնքի ղեկավարը:

Որևէ քաղաքական կամ անձնական պատճառ չկա, երկու համայնքում էլ ընտրությունները հաջորդ տարի են լինելու, և 2022թ.-ին կմիավորենք: Մեծ հաշվով, շատ բան չի փոխվելու, և հարցը միայն Շողակաթին ու Ճամբարակին չի վերաբերում: Մենք հանրապետությունում էլի խոշորացված տարբերակներ ունենք, որոնք 2022թ.-ի ընտրությունների ժամանակ կվերանայենք: Լիլիա Շուշանյանը բացարձակապես դերակատարություն չի ունեցել այս հարցում:

Իսկ Ստեփանավանի շրջանը, որը ՀՀ փոխվարչապետ Սուրեն Պապիկյանի ծննդավայրն է, ինչո՞ւ չեք միավորել նույն շրջանի Լոռի Բերդ և Գյուլագարակ համայնքների հետ, որոնք 2017թ.-ին փնջային մոդելով էին միավորվել: Նոյեմբերի 14-ին Ստեփանավանում ընտրություններ են նշանակված, կարող էիք նույն սկզբունքով այս շրջանը միավորել:

Այնտեղ էլ 2022թ.-ին է ՏԻՄ ընտրությունը տեղի ունենալու:

2017թ.-ին, երբ նախորդ իշխանությունը համայնքների հերթական միավորումն իրականացրեց, ես մի **հոդված** հրապարակեցի, որը վերնագրել էի այսպես. «Բոլոր համայնքները հավասար են, սակայն որոշ համայնքներ ավելի հավասար են, քան մյուսները»: Այս նախագծով նախորդ իշխանության արտոնյալներից վերցրիք իրենց շնորհած «առավելությունները», բայց նույնը կրկնեցիք յուրայինների համար: Կառավարության որոշ բարձրաստիճան պաշտոնյաների ծննդավայրերը չեն խոշորացվելու շրջանառվող նախագծերով, ինչո՞ւ:

Ես չեմ ասում, որ մեր նախագծած միավորման տարբերակն իդեալական է, թերացումներ կամ ոչ ճիշտ միավորումներ չկան, բայց ուզում եմ վստահեցնել, որ խոշորացման քարտեզում չեք գտնի որևէ համայնք, որտեղ անձնական դրդապատճառներից ելնելով՝ ինչ-որ բան է արվել: Միգուցե ասեք՝ ինչո՞ւ եք սպասում 2022թ.-ին, բայց, մեծ հաշվով, շատ բան չի փոխվելու, այնտեղ էլ մյուս տարի այդ հարցերը կկարգավորենք:

Երրորդ ՏԻՄ ընտրությունն է այս տարի անցկացվելու, որի ժամանակ համայնքների միավորում է իրականացվում, և այդ կիսատ-պռատությունը քարշ ենք տալիս՝ սխալների ուղղումը տեղափոխելով

հաջորդ ընտրություններ: Իրականում, շարունակում ենք պահպանել համայնքների անհամաչափությունը, որ նույնն է՝ հետաձգում ենք խոշորացման նպատակի իրագործումը: Վարչատարածքային բարեփոխումների մասին երբ հայտարարվեց, բոլորիս համոզում էին, որ տեղական ինքնակառավարման զարգացմանը խոչընդոտում է համայնքների անհամաչափությունը:

Այո, որոշակի անհամաչափություն, կարծում եմ, հիմա էլ կա, բայց շատ է փոխվել, շատ մեղմվել է: Մենք հիմա չունենք 110 000 բնակիչ ունեցող համայնք և 200 բնակիչ ունեցող համայնք, եթե ազգային փոքրամասնություններին նկատի չունենանք:

Ունենք, օրինակ, Գորայք համայնքը Սյունիքում:

Սյունիքի համայնքները կայացել են, պատերազմի ժամանակ էլ լավ են դրսևորել իրենց, և այդ հանգամանքը հաշվի առնելով՝ չենք անդրադարձել Սյունիքին: Բայց միակ հանգամանքը Սյունիքում Գորայքի հետ է կապված, և այն պայմանավորված է Գորայքի տեղադիրքով, հանքարդյունաբերական համայնք լինելով և այլ գործոններով: Գորայքն այդպես թողնելը ճիշտ որոշում է:

Վեդի քաղաքը Արարատի մարզկենտրոնն է եղել, հիմա ինչո՞ւ եք առանձին համայնք դարձրել, եթե ողջ Արարատի մարզը միավորել եք շրջանային տարբերակով:

Վեդիի հետ կապված հետևյալ շեղումն է արվել. առաջնորդվել ենք, թե մարզում քա՞նի քաղաք կա: Արարատի մարզում երեք շրջան կա, բայց 4 քաղաք՝ Արարատ, Վեդի, Մասիս, Արտաշատ: Համայնքները ձևավորել ենք քաղաքների շուրջ, և նրանցից յուրաքանչյուրի շուրջ բավականին մեծ թվով համայնքներ են միավորվել: Այդպես շատ տեղերում ենք վարվել, դրա համար էլ Կոտայքի մարզում ամենաշատն են մասնատված համայնքները, որովհետև ամենաշատ քաղաքներն այդ մարզում են:

Բայց այդ սկզբունքը չեք կիրառել Կոտայքի մարզի Եղվարդ և Նոր Հաճն քաղաքների դեպքում: Երկու քաղաքը միավորել եք նույն համայնքում:

Այո, ստացվում է, որ այդ սկզբունքը պահպանել էինք բոլոր քաղաքների դեպքում և միակ համայնքը, որտեղ երկու քաղաք ենք միավորում մեկ համայնքում, Եղվարդն էր: Արդեն առանձնացրինք այդ համայնքները, տարբեր կարծիքներ, դիմումներ, բողոքներ էինք ստացել այս նախագծի հետ կապված: ԱԺ-ում քննարկումների ընթացքում եկանք այն եզրահանգման, որ բերված փաստարկները բավականին արդարացի են և երկրորդ ընթերցումով փոփոխեցինք նախագիծը: Եվս մեկ փոփոխություն արվել է Արմավիրի մարզում: Տեսնելով, որ բնակչության ներկայացրած փաստարկները հիմնավոր են, համայնքային կենտրոնը Ջրառատից տեղափոխեցինք Գայ:

<https://hetq.am/hy/article/136396>